

ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑԻՐ ԱՅՍ ՉԱՏԿԻՆ

Ապրիլ լավագույն կյանքով

Մաս 1 (5-ից)

Մի փոքր ժամանակ էլ, եւ աշխարհքն էլ չի տեսնիլ ինձ, բայց դուք կտեսնեք ինձ. որովհետեւ ես կենդանի եմ, եւ դուք կենդանի կլինեք: Յովհաննես 14:19

Եւ ամենի համար մեռավ, որ կենդանի լինողները այլեւս ոչ թե իրանց անձերի համար կենդանի լինեն, այլ նրա համար՝ որ իրանց համար մեռավ, եւ հարություն առավ:
2 Կորնթացիս. 5:15

Ո՞րն է Հիսուսի առաջարկած լավագույն կյանքը

1. Իմաստավորված կյանքն է

Քրիստոս՝ մեր կյանքը ... Կողոսացիս 3:4

Օրինյալ է Աստված եւ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ իր առատ ողորմության համեմատ մեզ վերստին ծնեց դեպի կենդանի յույսը, Հիսուս Քրիստոսի մեռելներից հարություն առնելով, Դեպի այն անեղծ եւ անարատ եւ անթառամ ժառանգությունը, որ երկնքում պահված է ձեզ համար. 1Պետրոս 1:3-4

2. Սա Շնորհքով ազատագրված կյանք է

Բայց հիմա արձակվեցանք օրենքից մեռնելով նրան՝ որով որ բռնված էինք, որպեսզի հոգու նորոգությունով ծառայենք՝ եւ ոչ թե գրի հնությունով: Յովհաննես 7:6

Վասնզի խափանումն է լինում առաջի պատվիրանքին իր տկարության եւ անօգուտ լինելու համար:

Որովհետեւ օրենքն ոչինչ կատարեալ չարավ եւ ներս է մտնում մի ազնվագույն հույս, որով մոտենում ենք Աստուծուն: Եբրայեցիս 7:18-19

Որ իր անձը ամենի համար փրկանք տվավ, որ վկայություն լինի իր ժամանակներումը: 1 Տիմոթեոս 2:6

Որովհետեւ եթե մարմնավորապես ապրեք՝ կ'մեռնեք. բայց եթե հոգով մարմնի գործերն սպասանեք՝ կ'ապրեք:
Յովհաննես 8:13

3. Սա Էներգիայով լի կյանք է

Որովհետեւ ես պիտի զովացնեմ վաստակած հոգին, եւ ամեն նվաղած հոգին պիտի կշտացնեմ: Երեմիա 31:25

Ոչ թե զորությունով, եւ ոչ թե ուժով, այլ իմ հոգովը, ասում է Չորաց Տերը: Չաբարիա 4:6

Եւ եթե Հիսուսին մեռելներից հարուցանողի Հոգին ձեզանում բնակված է, ապա Քրիստոսին մեռելներից հարուցանողը ձեր մահկանացու մարմիններն էլ կ'կենդանացնի իր Հոգովը, որ ձեզանում բնակված է: Յովհաննես 8:11

Նրա համար չենք թուլանում. այլ թե եւ մեր դրսի մարդը փչանում է, բայց մեր ներսի մարդն օրեցօր նորոգվում է:
2 Կորնթացիս 4:16

Ինչպե՞ս եմ կարող ապրել այս արտակարգ կյանքը

Քրիստոսով ամենը կենդանանում են: 1Կորնթացիս 15:22

Ես եկա որ կյանք ունենան, եւ էլ ավելի ունենան:
Յովհաննես 10:10

Ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ մեղավորներին՝ ապաշխարության: Ղուկաս 5:32

Հաջորդ Քարոզի Թեման

Ապրիլ լավագույն կյանքով (Մաս 2)

Հովիվ Սարո Խաչիկեան